

J. P. M. R. L.

891.99

3887

2-89

2. 2nd - 1st June.

2nd June 1887

15/60

18/

887

ՊԵՏԶԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԼԵԶՎԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՅԵՐԵՎԱՆ ∞ 1938

891.99

թ- 89

ՅԵՌԵՎԱՆ Է 1961 թ.

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՔԱՌՅԱԿՆԵՐ

ՀՀԸԸ
3887
5491
1645
A



ՊԵՏՀԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒՐ



Մ Ե Տ Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ը

Այս տարի մարտի 23-ին լրացավ հայ մեծագույն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մահվան XV տարին:

Թումանյանը պատկանում է անցյալի այն խոշորագույն կլասիկների թվին, վորոնց անդուգական ստեղծագործական կարողութիւնները հավասար չափով հանդես են յեկել զրական բաղմապիսի ժանրերում: Նրա անմահ պոեմները՝ Մարոն, Լուեցի Սաֆոն, Անուշը, Թմկաբերդի առումը, Փարվանան, Սաաւեցի Դավիթը, Հազարան րլուլը, նրա լիրիկական բանաստեղծութիւնները, նրա պատմվածքներն ու հեքիաթները՝ Գիփորը, Մերոնի, Արջավորը, Քաջ Նազարը և մյուս գործերը—այս բոլորը վարակիչ ներշնչման և հոյակապ արվեստի սքանչելի կոթողներ են:

Արդարեւ, ի՞նչն է Թումանյանի ստեղծագործութիւնը դարձնում այնքան մեծ ու արժեքավոր, այնքան մեծ ու պայծառ, վոր ամենայն իրավամբ կարելի չէ համեմատել համաշխարհային գրականութիւն մեծահանճար գրողների ստեղծագործութիւնների հետ, ինչպիսիք են՝ Ռոմանթալեին, Պուշկինը, Շեքսպիրը, Դիքենս և մյուս խոշոր գրողները:

«Մեծ արվեստագետները կենդանի չեն մեզ հա-

մար: նրանց ջանքերն իզուր չեն անցել, նրանց լավագույն յերկերը արթնացրել են մաքեր և ոգնել ժողովրդին առաջ ընթանալու և դրանով իսկ գտնելու ազատագրման ուղին: Կլասիկների գեղարվեստական յերկերը, վորոնք կենդանի յեն կյանքի շնչով և մարդկային ջերմ սրտի բարախյունով, կարող են ոգնել մեր յերիտասարդությանը հասկանալու վոչ միայն անցյալը, այլև ներկան:

«Պրավդա»-յի այս նշանավոր առկերը ամբողջովին վերաբերում են նաև Թումանյանին: Յեվ իսկապես, ինչպես սիրում եր կրկնել Մ. Գորկին, միայն յերկրորդական գրողներն են փառաբանել ֆեոդալիզմն ու կապիտալիզմը, իսկ մեծ գրողների լավագույն ստեղծագործությունները «արթնացրել են մաքեր» և «ոգնել ժողովրդին առաջ ընթանալու և դրանով իսկ գտնելու ազատագրման ուղին»:

Թումանյանն անցյալի այդ մեծ արվեստագետների հետ միասին, կողք-կողքի քայլում ե նախ և առաջ իր անմահ ստեղծագործությունների ժողովրդականացումը, իր անսահման ժողովրդասիրությամբ, նրա ստեղծագործությունների մեջ արտացոլել ե աշխատավոր մասսաների տաղանդն ու իմաստությունը, նրա ցառումն ու բողոքը տիրող բռնակալական կարգերի և բարբարոսական տրադիցիաների դեմ, նրա անսահման առելությունը դեպի կալիաժատիրական-բուրժուական կարգերն ու «փո-

ղի քսակի» ասպեանները: Նրա արվեստի ժողովրդայնությունը ոտար և յեղել ամեն մի նեղ, աղգային սահմանափակութեան: Բուրժուական լիբերալ քրննադատությունը, ունակցիոն նացիոնալիստական կեդտոտ թափթփուկները, սպեցիֆիկ գրչակները և վուլգար սոցիոլոգիզմի «սպառահատ-անասրանները» վուլգար միջոցի առաջ կանգ չեն առել Թումանյանի բանաստեղծական կերպարանքն ազատագրու և կեդծելու բնագավառում: Նրանք աշխատել են Թումանյանին կապել նահապետական հետամնացութեան հետ, «հայրենի» նահապետական տան» հետ այն ժամանակի յերբ մեծ բանաստեղծի համար թանգ են յեղել ընդ որ աղգութեանների աշխատավորները, նրանց լեզուն, ֆոլկլորը, գրականութեանը, կուլտուրան:

Թումանյանի բանաստեղծական խառնվածքի այս ինտերնացիոնալ դեմը, հասկանալի չի, վոր չէր կարող դուր գալ վերոհիշյալ մարդկանց:

Լինելով աշխատավորութեան հետ կապված, սպառկերացնելով նրա լավագույն ներկայացուցիչների ամենաձանր կացութեանն ու տրագեդիան, մեծ հումանիստ Թումանյանը բնականաբար ժողովրդի յերջանկութեան խնդիրը չէր կարող կապել կապիտալիզմի կամ կարվածատիրական կարգերի հետ: Գծգոհելով տիրող կարգերից, նա շարունակ աշխատավոր մարդկութեան համար յերազել և մի վառ և յերջանիկ ապագա: Նա նույնիսկ հասել և այն բարձր գիտակցութեանը, վոր այդ լավագույն ապագան ան-

հրաժեշտ ե ձեռք բերել պայքարով: Այդ միաքը նա արտահայտել ե իր բազմաթիվ գրվածքներում: Հիշենք Սասունցի Դավիթը, Չարի վերջը կամ Անբուն կկուն, վորը նույն Չարի վերջն ե՝ վերամշակված. հենց այդ վերամշակության մեջ միանգամայն պարզ յերևում ե, վոր «չարին» պայքարելով վոչնչացնելու իր տեսակետը Թումանյանն ուղեցել ե ավելի խորացնել:

Հիշենք նաե հեղինակի գլուխ գործոց Հազարան բլբուլը: Այստեղ Թումանյանն ամենասուր հեղնանքի յե յենթարկում այն մարդկանց, վորոնք վողորմելի վախկոտներ են, վորոնք համակերպվում են իրենց անմխիթար վիճակին: Պոեմի հերոսը՝ Արեգը, վոր գնում ե յերջանկություն բերող Հազարան բլբուլը գտնելու—նա շատ լավ գիտակցում ե, վոր այդ տառնց դժվարությունները հաղթահարելու ձեռք չի բերվի ե վառված ե դժվարությունների դեմ պայքարելու յեռանդով:

— Խոչ են գեբը ե հրեհներ,
յերկյուղ չունեմ յեա պապի
Յեվ իմ ճամփեն վոչ փոթորիկ,
վոչ տառապանք կկապի:

Թումանյանի լավագույն գործերը չեյին կարող մտքեր չարթնացնել ե չոգնել «ժողովրդին առաջընթանալու» ե գրանով իսկ «գտնելու ազատագրման ուղին»: Ահա թե ինչու ժամանակն ե դեն շարտել այն տխմար տեսակետը, վոր իրր թե Թումանյանին

խորթ և պայքարի անհրաժեշտութեան գիտակցութեանը, վոր նա տոլատոյական է, պետիմիտ և և ալին, և ալին:


Ըմբոստանալով կապիտալիստական հասարակութեան գիշատիչ ելութեան դեմ, յերազելով հաշտ ու խաղաղ մարդկութեան մասին, Թումանյանը բնականաբար պետք և գտնվելու և գտնվեց Հոկտեմբերյան Մոցիալիստական Մեծ Հեղափոխութեանը ցնծութեամբ վողջունողների շարքում:

Թումանյանն աշխատավոր մարդկութեան ազատագրական մեծ պայքարի հերոսական բանակի կողմնանցով վող միայն վորպես պետ, ալի վորպես մարդ և քաղաքացի:

Մ. և Մ.




TABLE



Ե՛մ Եւրփայեան, Եւրփայեան.
Եւրփայեան ^{ուր} և Եւրփայեան,
նոյն անգամ հիշուի.
Եւրփայեան Եւրփայեան:

Եւրփայեան

Հովհ. Թումանյանի ինքնագիրը





Ա՛նց կացա՛ն...
Որերս թրոան, ա՛նց կացա՛ն.
Ախ ու վախով, դարդերով
Սիրտըս կերա՛ն, ա՛նց կացա՛ն:

1890



վերջացա՛վ...
Կյանքը մաշվեց, վերջացա՛վ.
Ինչ հույս արի՛ փուչ ելավ,
Ինչ խրնդություն՝ վերջը ցա՛վ:

1890



Հիմի բացել են հանդես
Յերգիչները իմ անտես.
Ջա՛ն, հայրենի՝ ծրդրիդներ,
Ո՛վ ե լրտամ հիմի ձեզ:

1916 թ. հունիս





Յե՛տ չեկա՛վ...
Դընա՛ց, գընա՛ց, յե՛տ չեկա՛վ,
Անկուշտ մահի՛ն, սեղ հողի՛ն
Գերի մընաց, յե՛տ չեկա՛վ:

1916 թ. հունիս



Ո՞ւր կորա՞ն...
Մոտիկներըս ո՞ւր կորա՞ն.
Ինչքան լացի, զեն ւածի՝
Չեն չի տըվին, լո՛ւտ կորան:

1916 թ. հունիս





Յերկու դարի արանքում,
Յերկու քարի արանքում,
Հոգնել եմ նոր ընկերի
Ու հին ցարի արանքում:

1917 թ. հունվար 15



Առատ կըլինի կինը արդ,
Կընկնի եգի գինը արդ,
Կըբարձրանա նրա տեղ
Ազատ, անկախ, կինը մարդ:

1917 թ. հունվար 16



Ժող է իմ վիշա՛ն, ա՛նաւի ու խոր,
Լիքն ակունքով հագարավոր.
Իմ գայրույթը լիքն է սիրով,
Իմ գիշերը լիքն աստղերով:

1917 թ. փետրւար 9



Քանի՜ մահ կա իմ սրբոում,
Թափուր զահ կա իմ սրբոում.
Չե՞ դու յեւ ես մահացու.
Մահի ահ կա իմ սրբոում:

1917 թ. նոյեմբեր 7



Կյանքից հարբած անցավոր,
Ահա դարձյալ անցավ որ,
Դու վազում ես դեպի մահ—
Մահը քոնում հանցավոր:

1917 թ. նոյեմբեր 10



Հին աշխարհըր ամեն որ
Հազար մարդ ե մըռնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Ըսկըսվում ե ամեն դր:

1917 թ. հոյեմբեր 11



Յե՛տ յեկե՛ք...
Դարնան վարար զեա յեկե՛ք,
Անցա՛ծ որեք, խի՛նդ ու սե՛ք,
Դարձե՛ք, իրար ճեա յեկե՛ք:

1917 թ. նոյեմբեր 11



Զոր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ ե ինձ կապում.
Ամենքի հետ սպրում եմ,
Ամենքի չափ տառապում:

1917 թ. նոյեմբեր 12



Ո՛վ իմանա՛ որ ընկանք,
Քանի որվա հյուր ընկանք,
Սերն ու սիրտն ել յերբ չըկա՛
Կըրա՛կ ընկանք, զո՛ւր ընկանք:

1917 թ. հոկտեմբեր 30



Ինչքան ցավ եմ տեսել յես,
Նենգ ու դավ եմ տեսել յես,
Տարել, ներել ու սիրել,—
Վատը՝ լավ եմ տեսել յես:

1917 թ. դեկտեմբեր 24



Յերագումբս մի մարի,
Ծոտըս յեկավ հարցմունքի.
— Աստված պահի քո վորդին,
վո՞նց եր համր իմ ճագի...

1917 թ. դեկտեմբեր 24



Բանի՜ ծնորից եմ վառվել,
վառվել ու հուր եմ դառել,
հուր եմ դառել լույս տրվել,
Լույս տալով եմ ըստգառվել:

1917 թ. դեկտեմբեր 24

11 5491 3887





Մընացել ե բերդը մեզ,
Հաղթանակի յերթը մեզ.
Անց են կացել ով կային,
Հիմի կըգա հերթը մեզ:

1917 թ. դեկտեմբեր 26



Հոգիս՝ տանը հաստատվել —
Տիեզերքն ե վողջ պատել.
Տիեզերքի տերն եմ յես,
Ո՞վ ե արդյոք նրկատել:

1917 թ. դեկտեմբեր 27



Վրէնց ե ժպտում իմ հոգին
Զարին, բարուն,—ամենքին.
Լույս ե տալիս վողջ կյանքիս
Ու են համրիս անմեկին:

1918 թ. հունիս 4





Ի՞նչ ես թրոչում, խեղ-ղեղ սիրտ,
Հազար բանի յետեղ, սի՛րտ
Յես վո՞նց հասնեմ հազար տեղ
Քեզ պես թափով, թեթեղ, սի՛րտ:

1918 թ. հունվար 25



Իմ սո՛ւր, արթուն ազանջում
Մի խոր ձեն և միշտ հրնչում,
Անհո՛ւն, անքո՛ւն կարոտով
Իրեն մոտ և ինձ կանչում:

1918 թ. հունվար 26





Մ՞վ ե՞ ձեռքով անում, ո՞վ,
Հեռվից անթիվ ձեռքերով՝
— Զա՛ն, հայրենի՛ անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով:

1918 թ. փետրվար



Աշնան ամպին ու զամպին,
Մոլոր նրստած իր ճըմբին,
Լոռու հանդում՝ մի արտուտ
Նայում ե միշտ իմ նամփին:

1918 թ. փետրվար



Մի հավք զարկի յես մի որ.
Թրուա՛վ, զընաց վիրավոր:
Թըռչում ե միշտ իմ մըտքում
Թե՛վր արնոտ ու մոլոր:

1918 թ. փետրվար 2



Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար բուն,
Յերագի մեջ յերջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն

1918 թ. փետրվար 2





Յերկու շիրիմ իրար կից,
Հավերժական լուռ դրկից,
Թախծում են պաղ ու խորհում
Թե՛ ի՞նչ տարան աշխարհից:

1918 թ. փետրվար 4



Կրթացնում են, արտորում
Արտուտները արտերում,
Թրոշում մանուկ հոգուս հետ,
Շախրում, ճրխում յեթերում:

1918 թ. հունիս

Բերանն արևոտ Մարդակերը
են անբան
Հագար դարում հագիվ դառավ
Մարդասպան.
Չեղբերն արևոտ գրնում է նա
դեռ կամկար,
Ու հեռու յի մինչեւ Մարդը
իր նամիման:

1918 հոկտեմբեր



Մեռա՛ն, մեռա՛ն... Յեվ, ահա,
Խառնըվել են կյանք ու մահ.
Չեմ հասկանում աշխարհի
«Կան ու չկան» յես հիմա:

1919 թ. նոյեմբեր 8

Հե՛յ ագահ, մարդ, հե՛յ անհոգ մարդ,
միտքըդ յերկար, կյանքըդ կարճ,
Քանի՛ քանիսն անցան քեզ պես,
քեզնից առաջ, քո առաջ.
Ի՛նչ են տարել նրբանք կյանքից,
թե ինչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր
յերկու որվան ես ճամփեդ:

1919 թ. հոկտեմբեր



Դու մի ամհայտ Բանաստեղծ ես,
 չտեսնված մինչև հոր.
Առանց խոսքի յերգ ես թափում
 հայաքներով լուսավոր:
Յես ել, ասենք, զարմանալի
 ընթերցող եմ բախտավոր,
վոր կարդում եմ եդ յերգերը
 հարան հեշտ ու հարան խոր:

1919 թ. նոյեմբեր



Ազատ որը, ազատ սերը,
ամեն քարիք իր ճեղքին,
Տանջում, տանջվում, վորոնում ե
ու դժբախտ ե նա կրկին.
Ե՛յ անխելք մարդ, յերբ տի թողնես
ապրողն ապրի սրբոսալի,
Յե՛րբ տի ապրես ու վայելես
ես աշխարհքը շեն ու լի:

1919 թ. հոկտեմբեր

Արեւելքի յեղեմներին
իջալ պայծառ իրիկուն,
Հերիաթական պալատներում,
ըսպատում են իմ հոգուն.
Ի՞նչ եմ շինում ես ցեխերում,
աղմուկի մեջ վայրենի...
Ա՛խ, թե նորից գրտնեմ ճամփան,
դեպի ննտե՛ղ, դեպի տո՛ւն...

1919 թ. հոյեմբեր 21

Վո՞ր աշխարհում ունեմ շատ քան.
միտք եմ անում՝ ե՞ս, թե եմ.
Մեջ տեղ կանգնած միտք եմ անում,
չեմ իմանում՝ ե՞ս թե եմ.
Աստված ինքն ել, տարակուսած,
չի հասկանում ինչ անի.
Տանի՛, թողնի՛,—վո՞րն է քարին,
վո՞ր սահմանում, ե՞ս թե եմ:

1919 թ. հոյեմբեր



Քուն թե արթուն՝ որիս շատր
 յերազ յեղավ, անցկացավ,
Յերազն ել, նուրբ ու խուսափուկ,
 վրոագ յեղավ, անցկացավ.
Վրոագ անցան յերազ, մուրագ,
 ու չը հասա վոչ մեկին,
Կյանքըս թեթեվ տանուլ տրված
 զրրագ յեղավ, անցկացավ:

1919 թ. դեկտեմբեր 6



Հուսր լուսին քո ժպիտն ե.
իմ՝ յերեսին ճառագում,
Յերբ, ա՛խ, արդեն անբույժ զարկած,
դեպի մահն եմ՝ յես հագվում
Եսպես են վառ արեգակի
շողերի տակ կենսածոր
Կայծակնահար կաղնին վոտքի
չորանում ե որեցոր:

1920 թ.



Կորցրել եմ, ո՞ւր գրտնեմ,
Տեղը իմաց տուր՝ գրտնեմ,
Ման եմ զալի յես մըթնում
Քեզ մոտ զալու, դուռ գրտնեմ:

1920 թ. փետրվար 4



Ի՞նչ իմանաս քստեղծողի
զաղտնիքները անմեկին.—
Ընկեր տվա՛վ, իրար կապեց,
ես աշխարհքում ամենքին.
Բանաստեղծին թողեց մենակ
մեն ու մենակ իրեն պես,
Վոր իրեն պես մըտիկ անի
ամեն մեկին ու կյանքին:

1920 թ, մարտ 30



Խայամն ասավ իր սիրունուն.

— վոտըդ ըզգույշ դիր հողին,
Ո՛վ իմանա՛ վոր սիրունի,
քիբն ես կոխում դու հիմի...»
Հե՛յ, ջա՛ն, մենք ել ըզգույշ անցնենք,
ո՛վ իմանա, թե հիմի
Են սիրունու քիբն ենք կոխում,
թե հուր լեզուն Խայամի:

1920 թ. ապրիլ 6



Յերնեկ եսպես՝ անվերջ քեզ հետ—
իմ կյանքի հետ լինեյի.
Հազար յերնեկ՝ դաշտում մենակ՝
յերկրների հետ լինեյի.
Բայց ո՞վ կըտա են վայելքը՝
ինքրս ինձ եւ չրգգայի,
Ու հալվեյի, ծավալվեյի,
ամենքի հետ լինեյի...

1920 թ. մայիսի 12





Ամեն մի սիրտ ցավով լցրեց
մեր դարում,
Ցավոտ սրտով աշխարհ լրցվեց
մեր դարում.
Ցավոտ աշխարհըն յեկալ լցվեց
բովանդակ
Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ
մեր դարում:

[1921]



Առատ, անհատ Աստծու նրման
միշտ տեղալուց հոգնել եմ յես.
Հոգիս ծարավ՝ սրբան-նրբան
մըտիկ տալուց հոգնել եմ յես.
Մինը պիտի զար իմ դեմը՝
ճոխ ու շրոայլ անհաշիվ,
Ամեն ճամփում ըսպատելուց
ու փնտրելուց հոգնել եմ յես:

1921 թ. փետրվար 7



Յես շընչում եմ միշտ կենդանի
Աստծու շունչն ամենուր.
Յես լլսում եմ նրբա անլուռ
կանչն ու հունչը ամենուր.
Վեհացնում ե ու վերացնում
ամենալուր իմ հոգին
Տիեզերքի խոր մեղեդին
ու մըրմունջը ամենուր:

1921 թ. փետրվարի 14



Արյունայի աղետներով,
աղմուկներով ահարկու,
Արեվմուտքի ըստրուկները
Մեքենայի յեվ վոսկու՝
Իրենց հոգու անապատից
խուսափում են խուռներամ
Դեպ Արեվելքն աստվածային—
հայրենիքը իմ հոգու...

1921 թ. մայիսի 1



Ամեն անգամ քո տրվածից
 յերբ մի բան ես դու տանում,
Ամեն անգամ՝ յերբ նայում եմ,
 թե ի՞նչքան ե դեռ մ'նում,—
Զարմանում եմ, թե՛ ո՞վ Շոալ,
 ի՞նչքան շատ ես տրվել ինձ,
ի՞նչքան շատ եմ դեռ քեզ տալու,
 վոր միանանք մենք նորից:

1921 թ. մայիսի 2





Հազար տարով, հազար դարով
առաջ թե յետ, ի՞նչ կա վոր.
Յես յեղեկ եմ, կա՛մ կրկնեմ
հար ու հավետ, ի՞նչ կա վոր
Հազար եսակն ծեփեր փոխեմ,
ծեփը խաղ ե անցավոր,
Յես միշտ հոգի, տիեզերքի
մեծ հոգու հետ, ի՞նչ կա վոր:

1921 թ. մայիսի 3



Ասի. «հենց լոկ ես աճյունն ե
ու անունը, վոր ունեմ...»
Յերբ ճառագեց անծայրածիր
քո ժպիտը հոգուս դեմ.
— Ի՞նչ ե աճյունն եղ անկայուն,
ու անունը, վոր ունես,
Դու Աստված ես, դու անհո՞ւն ես,
անանուն ես ու անյես...»

1921 թ. մայիսի 6



Աստեղային յերազների
աշխարհքներում լուսակաթ,
Մեծ խոհերի խոյանքների
հեռուններում անարատ,
Անհիշելի վերնուշերի
մըշուշներում նըրբադոտ՝
Յերբեմն, ասես, ըզգում եմ յես,
Թե կը հասնեմ Նըրա մոտ...

1921 թ. մայիս 16



Բարձր ե հընոց աշխարհքն Հայոց
ու Մասիսը յերկնավետ.
Իմ խոր հոգին են բարձունքին
խոսք ե բացել Նորա հետ—
Անհաս բանից, ըսկզբանից:
յերբ չըկան ել դեռ չըկար,
Մինչեվ վախճանն անվախճանի
ըննում ե դարեդար:

1921 թ. մայիսի 21



Ո՛վ անճառ Մին, վոր ամենին
միացնում ես մի կյանքում,
Ամեն կյանքում ու յերակում
անտես, անկեզ բորբորում,—
Վողջ ազատ են ու հարազատ
ես աշխարհքում քեզանով,
Վողջք քո մեջ՝ անմահ, անվերջ՝
քեզ են յերգում քո ծենով...

1921 թ. ռոստոս





Աստծու բանտն են տաճարները—
աշխարհքներում բովանդակ,
Իբր ենտեղ ե ապրում տերը,
պաշտողների փակի տակ:
Հարկավ՝ ազատ նա ժրպտում ե
ամենուրեք ամենքին,
Բայց դու նայիր խեղճ ու կրրակ
մարդու գործին ու խելքին:

1921 ռգաւսոսի 25



Կյանքըս արի հրրապարակ,
վոտքի կոխան ամենքի.
Խափան, խուպան ու անպրտուղ,
անցավ առանց արդյունքի:
Ի՛նչքան ծաղիկ պիտի բուսներ,
վոր չըբուսավ ես հողին...
Ի՛նչ պատասխան պիտի յես տամ
հող ու ծաղիկ տրվողին...

1921 թ. սեպտեմբեր 5



Իմ կրնունքին յերկինքը՝ ժամ,
արեվը՝ ջահ սրբազան,
ծիածանը՝ նարոտ յեղավ,
ամենքի սերըն՝ ավազան.
Սարը յեղավ կրնառայրըս,
ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կրնքողըս նա ինքըն յեղավ,
վոր սահմանեց ինձ պոետ:

1921 թ. հոկտեմբեր



Հե՛յ ճամփաներ, ճամփանե՛ր.
Անդարձ ու հին ճամփաներ,
Ռ՞վքեր անցան ձեզանով,
Ռ՞ւր զընացին, ճամփաներ:

1922 թ.





Աղբյուրները հրնչում են ու անց կենում,
Ժարավները տենչում են ու անց կենում,
Ու յերջանիկ ակունքներին յերագում
Պոետները կանչում են ու անց կենում:

1922 թ. հունիսի 9



Խ Ա Ք Ա Ն Ի

Ասում են թե հազար տարին
մի անգամ
Մի փրկիչ ե աշխարհ գալիս,—
մի պատգամ.
Մին, յերբ յեկավ, ծընված չեյինք
մենք մորից,
Մին եւ յերբ գա, մեռած կըլնենք
ցավերից:

1922 թ. հուլիս



Ժուլիսը կելնի պատուհանից յերբեվե.
Հավքըդ կերթա իրեն բընից յերբեվե.
Թեկուզ մի դար ապրես սրբտով մըտերով իդ
Չարի սրբտով կելնես տանից յերբեվե:

1922 թ. հուլիս





Տիեզերքում աստվածային
մի ճամփորդ ե իմ հոգին.
Յերկրից անցվոր, յերկրի փառքին
անհաղորդ ե իմ հոգին.
Հեռացել ե ու վերացել
մինչ աստղերը հեռավոր,
վար մ'նացած մարդու համար
արդեն խորթ ե իմ հոգին:

922 ք. հուլիսի 8



Ենքան շատ են ցավերն, ավերն
իմ սրբտում,
Ենքան տրբտում կորած լավերն
իմ սրբտում...
Չեմ ել հիշում չար ու խավար
են ժամին՝
Յերբ են փայլել ուրախ որերն
իմ սրբտում:

1922 թ. հուլիսի 12



Յե՛կ, Խաքանի՛ ու հեռացիր
 ես չարության գրնդանից,
Շեն ու շենսիրտ, անցի՛ր, գնա
 ցավ ու հոգսի ես տանից.
Կյանք ես առել յերկրնքիցը,
 դա շրջա յե դառել քեզ,
Յետ տուր իրեն տըված կյանքը,
 թրոիր ազատ ամենից:

1922 թ. հուլիս



Հոգուդ հավքը հանկարծ թըռաւ՝
ի՞նչ ես դու.
Ճամփիդ կհստամ ձիդ վոր կորաւ՝
ի՞նչ ես դու.
Յեթե մարդ ես—կյանքը փոխ ե
տըված քեզ,
Փոխ տըվողը վոր յետ տարաւ՝
ի՞նչ ես դու:

1922 թ. հունիս



Պատ. խմբագիր Ա. Տ ե ռ ս ե ռ յ ա ն
Տեխ. ձեվավորումը Մ. Ե փ Ր Ի կ Ի
Կազմի ռեկե պորտբեն նկարել է
Ան. Մ ի ի ք ա Ր յ ա ն ը

—
Տպագրված է Պետական տպարանի
Հրատարակչության տպարանում
Յերեվան, Տեղան փողոց № 68.
Դրամ. լիազ. հ—3508: Պատվ. 102
Տիրած 3000 (1000-ը շահի քաղաքում)



Դիմը շահի քաղաքում 2 ռ., հատ. քաղաքում 1 ռ. 50 կ. (կազմում)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040605



5491